Ելնելով վերոգրյալից և գործում առկա ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտությունից՝ Դատարանը հանգում է այն եզրակացության, որ հայցվորի կողմից ներկայացված պահանջն անհիմն է և ենթակա է մերժման:

Դատական ծախսեր.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից»:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն»:

Տվյալ պարագայում, Հայցվորի կողմից նախապես վճարվել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական տուրքի գումարը՝ 30.000 ՀՀ դրամ գումարի չափով, ուստիև հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում պետական տուրքի հարցը համարվում է լուծված:

Դատական այլ ծախսերի բռնագանձման պահանջ չի ներկայացվել:

Հայցի ապահովման միջոցի վերացման հարցը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ «Վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի եզրահանգումներ՝ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանելու կամ վերացնելու մասին»:

Տվյալ դեպքում Դատարանը 23.02.2023 թվականի որոշմամբ մասնակի բավարարել է հայցվորի կողմից ներկայացված միջնորդությունը՝ պարտավորեցնելով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայցվոր ընկերությանը հանել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ուստիև հայցը մերժման ենթակա լինելու պայմաններում Դատարանը հանգում է այն եզրակացության, որ Դատարանի 23.02.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը ենթակա է վերացման վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ հոդվածներով և 198-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ «ԽԼՂԱԹՅԱՆ ՇԻՆ» ՍՊ ընկերության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 21.03.2022 թվականին կնքված «ԱՍՀՆ-

ԳՀԱՇՁԲ-22/17» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.02.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնել վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից :

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հ. ԶԱՐԳԱՐՅԱՆ

Վճիռը չի բողոքարկվել և _____ թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Հ. ԶԱՐԳԱՐՅԱՆ